Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

31.01.2022թ.-ին կնքված թիվ PDU-02-01-22
Փոստային կապի ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

19-.12.2022 թ.

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 19.02.2021թ.-ի թիվ 418-Ա հրամանով, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 31.01.2022թ.-ին կնքված թիվ PDU-02-01-22 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 500.000.000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 578.600.000 (հինգ հարյուր յոթանասունութ միլիոն վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Կոմերցիոն տնօրեն՝

Ցոլակ Հովհաննեսյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ՝ 01223338
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ՝ 900011288025
Հեռ.՝ (060) 713-428

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

Աշոտ Ավագյան ----------
/ստորագրություն/